ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԵՀԴԻ ԻՄԱՆԻՓՈՒՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Հանուն հոգու և մտքի Աստծո

Հանուն Նրա անհուն իմաստության, որ հասու չէ մտքին մարդկային,

Իրանի և Հայաստանի՝ երկու երկրների ժողովուրդների բարեկամության պտղաբեր ծառը, որն արմատներով խորանում է այս երկու ժողովուրդների համապարփակ հարաբերությունների երկարամյա պատմության մեջ և իր դրսևորվումն է գտել իրանցիների և հայերի մշակութային, արվեստի, լեզվական, կենցաղավարության, ավանդույթների ու բարոյական արժեքների բազմաթիվ ընդհանրություններում:

Հայաստանի Հանրապետության անկախացումից ու Կոմունիստական համակարգի յոթանասունամյա բարձր պարիսպների քանդվելուց՝ այդ հարաբերությունները նոր շունչ ստացան և երեսուն տարի առաջ այսպիսի մի օր, երկու երկրների միջև պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր, այդ բարեկամության ծառը երկու ժողովուրդների ընդհանրությունների ընդլայնման տիրույթում ավելի շատ պտուղներ տալու ու բողբոջելու ավետիսը մեզ տվեց:

Իրանի Իսլամական Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունն այս երեսուն տարիների ընթացքում մեծ ու արժեքավոր փորձ են կուտակել, և երկու ժողովուրդներն այս տարիների իրադարձությունների հնոցում կոփվելով՝ հասել են այնպիսի հասունության ու փորձառության, որ ոչ մի չարակամություն ի զորու չէ պատմության երկայնքով ձգվող

երկու ազգերի բարեկամության կամրջի վրա խոչընդոտ կամ արգելք հանդիսանալ:

Այս երեսուն տարիների ընթացքում բարեկամ երկու ժողովուրդների ու հարևան երկրների միջև մշակութային, գեղարվեստական, գիտական և կրոնական կապերի ընդլայնումը՝ մյուս ոլորտներին զուգահեռ, ինչպես նաև այլ ոլորտների հանդեպ մշակութային որոշ բնագավառների առավել կայացած և զարգացած համագործակցությունը, նախանշել է մշակութային ասպարեզում համագործակցության առավել բարեկեցիկ ապագայի պայծառ ու հուսադրող տեսլական:

Ապագան՝ Իրանում հայ հայրենակիցների խաղաղ գոյակցության ֆոնին, որն աշխարհի համար լավագույն համակեցության յուրօրինակ էտալոնի է վերածվել, տարածաշրջանի ժողովուրդների խաղաղության, բարեկամության և փոխադարձ հարգանքի լավագույն ավետաբերը կդառնա:

Իսլամական մշակույթի և հաղորդակցության կազմակերպությունը՝ որպես արտերկրում Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային գործունեության պատասխանատու բարձրագույն մարմին, այսօր էլ, ինչպես և նախորդ տարիներին, բարեկամ և հարևան Հայաստանի հետ մշակութային համագործակցության համակողմանի զարգացումն իր աշխատանքային առաջնահերթությունների օրակարգում է զետեղել և Հայաստանի մշակութային, գիտական, արվեստի ու կրոնական կենտրոնների օգնությամբ իր կառավարման այս պատմական նոր շրջափուլում, որը փոփոխությունների միտված մոտեցմամբ ձգտում է նոր ասպարեզներ բացել միջազգային մշակութային համագործակցության տարբեր բնագավառներում՝ նպաստելով երկու երկրների մշակութային հարաբերությունների մակարդակի ավելի բարձրացմանը:

Շնորհավորելով Իրանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով «Հայաստան–Իրան. պատմական անցյալը և ներկան» միջազգային գիտաժողովի կազմակերպիչներին՝ ամենակարող Աստծուց հայցում եմ առողջություն և հաջողություն այս կարևոր գիտական միջոցառման մասնակիցների համար և ցանկանում եմ, որ այս համաժողովն ու նրա մասնակիցները հասնեն համաժողովի թիրախավորված գործնական նպատակներին, որոնք միանշանակ ուղղված են երկու երկրների համապարփակ հարաբերությունների ամրապնդմանն ու խորացմանը։